

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Ֆոտոն ՍՊԸ-ն ԵԹ-ԷԱՃԱՊՁԲ-23/35 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>ՄՈԴՈՒԼ 1 Աշխատասեղան թվով 16 հատ, յուրաքանչյուրը (1360x600x750)մմ: 1. Համակարգիչը մոնիտորի և ստեղնաշարի հետ կապող լարերի համար նախատեսել անցքեր ներկառուցվող կահույքի վրա: 2. Համակարգիչների ներքին ցանցին միացման կետերը (անհրաժեշտության դեպքում) նախատեսել ներկառուցվող կահույքի վրա վարդակի օգտագործմամբ: 3. Էլեկտրական սնուցման կետից դեպի սեղան տարվող Էլեկտրական լարերը անցկացնել կորոբների միջով և հնարավորինս, աշխատակիցների գործունեությանը չխանգարող հատվածներով: 4. Էլեկտրական լարանցումները կատարելիս պահպանել անվտանգության նորմերը; 5. Նախատեսել հարմար տեղ ներքին հեռախոսի տեղադրման համար և դրա միացումը ներքին ցանցի հետ: ՄՈԴՈՒԼ 2 Ընդունարանի սեղան ապակյա բաժանումով՝ թվով 13 հատ, յուրաքանչյուրը (1375x600x750)մմ: 1. Նախատեսել Էլեկտրական սնուցման վարդակների տեղադրում ներկառուցված կահույքի վրա հետևյալ հաշվարկով՝ ա. Յուրաքանչյուր համակարգիչ համար 2 հատ բ. Տպող սարքի համար մեկ հատ. գ. Եթե տպող սարքը և սկաները առանձին սարքեր են, ապա մեկ վարդակ նախատեսել սկաների համար. դ. Մեկ լրացուցիչ Էլեկտրական վարդակ նախատեսել աշխատակցի համար ինդիվիդուալ լուսավորություն տեղադրելու համար: Յուրաքանչյուր աշխատակցի համար նախատեսել LED տեսակի շարժական լուսատուի տեղադրում: 2. Համակարգիչը մոնիտորի և ստեղնաշարի հետ կապող լարերի համար նախատեսել անցքեր ներկառուցվող կահույքի վրա: 3. Համակարգիչների ներքին ցանցին միացման կետերը (անհրաժեշտության դեպքում) նախատեսել ներկառուցվող կահույքի վրա վարդակի օգտագործմամբ: 4. Էլեկտրական սնուցման կետից դեպի սեղան տարվող Էլեկտրական լարերը անցկացնել կորոբների միջով և</p>

հնարավորինս, աշխատակիցների գործունեությանը չխանգարող հատվածներով: 5. Էլեկտրական լարանցումները կատարելիս պահպանել անվտանգության նորմերը; 6. Նախատեսել հարմար տեղ ներքին հեռախոսի տեղադրման համար և դրա միացումը ներքին ցանցի հետ 7. Աշխատատեղերը միմյանցից առանձնացնող ապակե միջնորմերը նախատեսել բարձրորակ թրժած ապակուց ա. Ապակին սեղանին միացնող սարքավորումները նախատեսել բարձրորակ ամուր սարքավորումով. բ.Ընդունարանի սեղանի ներսի հատվածում՝ աշխատակիցների միջև նախատեսել կողադիր սեղաններ: Կողադիր սեղանի ներքևի հատվածում նախատեսել 1 հատ Էլեկտրական վարդակ: ՄՈԴՈՒԼ 3 Դուռ, ապակյա, մետաղական շրջանակով 1. նախատեսել բարձրորակ թրժած ապակուց: ՄՈԴՈՒԼ 4 Պահարան: Ընդհանուր առմամբ 45քմ (տեղադրումը տարբեր հատվածներում և փոփոխվող չափերով, դարակների բաժանումները կարող են տարբերվել ): 400մմ խորությամբ ստանդարտ պահարան սպիտակ լամինատով 1. Դարակների, դռների /նաև ապակյա/ և շարժական դռների փականները, դարակների շարժական սարքավորումները նախատեսել բարձրորակ և նախատեսել այն տարբերակները, որի աշխատանքները առավել անաղմուկ են: ՄՈԴՈՒԼ 5 Պահարան: Ընդհանուր առմամբ 10քմ (տեղադրվելու է տարբեր հատվածներում, դարակների բաժանումները կարող են տարբերվել): 600մմ խորությամբ ստանդարտ պահարան սպիտակ լամինատով: Ընդհանուր առմամբ՝ տարբեր հատվածներում՝ 1. Դարակների, դռների /նաև ապակյա/ և շարժական դռների փականները, դարակների շարժական սարքավորումները նախատեսել բարձրորակ նյութից և նախատեսել այն տարբերակները, որի աշխատանքները առավել անաղմուկ են: ՄՈԴՈՒԼ 6 Խոհանոցային սենյակի կահավորում: 1. Խոհանոցային կահույքը պետք է պատրաստվի բարձրորակ MDF-ից: Գույնը սպիտակ: Սեղանածածկի հաստությունը 400մմ: MDF-ի երեսպատման մակերևույթը պետք է լինի ջրակայուն: Մակերեսը 6 քմ.: Պետք է նաև լինեն կախովի պահարաններ և բացովի դարակներ: Նախատեսել լվացարան երկտեղանի, ծորակ և ջրահեռացման համակարգ: Խոհանոցի սենյակում նախատեսել 3 հատ կլոր սեղան /ձևը և գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ/ (4-5 հոգու նստելու համար) և 20 հատ մեջքով թեթև մետաղից խոհանոցային աթոռ՝ աթոռների նստատեղերը ՄԴՖ-ից /կահույքի նույն նյութից/: Եսքիզում նախատեսել թղթե անձեռոցիկների պատին կապվող սարքի, սառնարանի և միկրոալիքային վառարանի տեղադրման հատվածները: Նախատեսել հայելու տեղադրում: 2. Նախատեսել հանդերձարան և հագուստի համար նախատեսվող պահարաններում նախատեսել յուրաքանչյուր պահարանի համար կողային փականներ: Առաջին հարկի ներկառուցված ողջ կահույքի (որոշ դեպքերում տարբերվող բնութագրերով) պատրաստման աշխատանքները ներկայացվում է մեկ չափաբաժնով, որպեսզի պահպանվի ընդհանուր դիզայնի ներկայան ռճը և օգտագործվող նյութերի նմանությունը: Կահույքի վերջնական չափագրումը կիրականացվի մրցույթում հաղթող ընկերության կողմից: Կից ներկայացվում են բոլոր մուղուլների գծագրերը:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО Фотон в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕР-ЕЦХЦПЗР-23/35 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	